ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թ. հունիսի 6-8-ը Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անուն, ազգանունը՝

Լևոն Խալիկյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա) 2017 թվականի հունիսի 6-8-ը

4. Հրավիրող կողմը՝

Եվրասիական տնտեսական հանձնաժողով

5. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն 2017 թվականի հունիսի 7-ին Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում կայանալիք Եվրասիական տնտեսական միության անդամ-երկրների սպառողների շահերի պաշտպանության հարցերով խորհրդատվական կոմիտեի երկրորդ նիստին:

6. Քննարկված թեմաները՝

Սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների համապատասխան լիազորված մարմինների համագործակցության արդյունավետության բարձրացման իրականացման հարցը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Գործուղման շրջանակներում քննարկվել են մի շարք հարցեր.

- Սպառողների իրավունքների պաշտպանության ազգային համակարգի ձևավորում,
- 2014թ-ի մայիսի 29-ի Եվրասիական տնտեսական միության պայմանագրի մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ ռուսաստանյան կողմի առաջարկություններ,

- Սպառողների իրավունքների պաշտպանության բնագավառում Եվրասիական միության անդամ երկրների կողմից միասնական քաղաքականության իրականացման ընդհանուր մոտեցումներ,
- Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և անդամ երկրների լիազոր մարմինների իրավունքներ և պարտականություններ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպման արդյունքում իրականացվել է կոնտակտային տվյալների փոխանակում և ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ անհրաժեշտության դեպքում էլեկտրոնային հաղորդակցման միջոցով ինչպես տեղեկատվության փոխանակման, այնպես էլ հետագայում հնարավոր համագործակցության, փորձի փոխանակման նպատակով՝ ռուսաստանյան մասնագետների կողմից Հայաստանում սեմինարների անցկացման վերաբերյալ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Գործուղման շրջանակներում պարզաբանվեցին սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների համապատասխան լիազորված մարմինների համագործակցության արդյունավետության բարձրացման իրականացման հնարավոր ժամանակահատվածների/անցումային դրույթների հետ կապված մի շարք հարցեր: Առաջարկվեց մասնագետների կողմից Հայաստանում անցկացնել սեմինար խորհրդակցություններ:

10. Գործուղվողը՝

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար՝ Լևոն Խալիկյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը՝

13.06.2017 թ. **Լ.Խալիկյան**